

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ՍԱՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ
ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 23.12.2016 թ. թիվ 23 որոշմամբ

ՍԱՐԱԿԱՊ

2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- 1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
- 1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ
- 1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
- 1.4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
- 1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
- 1.7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.8. ԽՍԵԼՈՒ և ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ
- 1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ
- 1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- 1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
- 1.12. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.13. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
- 1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
- 1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
- 1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- 1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- 2.1. Համայնքի ռազմավարությունն է.
- 2.2. Հիմնական նպատակները

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

- 3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 3.2. ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
- 3.3. ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
- 3.4. ՔԱՌԱՄՅԱ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.5. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱԿԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
- 3.6. ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՌԿ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
- 3.6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ` ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԱՎԿԵՐՊՈՒՄ

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Սարակապի համայնքի 2016-2020 թթ. ՀԶԾ`_Ի մշակված է ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում և հանդիսանում է համայնքի համալիր զարգացմանն ուղղված ուղեցույց փաստաթուղթ:

ՀԶԾ`_Ի իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ: Այն նախատեսում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը: Ծ` ՀԶԾ ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-

տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում:

Այն ՀԶՀՕ ուղղված ուղեցույց փաստաթուղթ է, որը կարող է հաշվի առնվել ՀՀ Շիրակի մարզի զարգացման, ինչպես նաև ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության, լեռնային համայնքների զարգացման, աղքատության կրճատմանն ուղղված ռազմավարական ծրագրերում:

ՀԶՀՕ-ն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ուժեղ և թույլ կողմերը, դասակարգվել են առաջնային և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները, վերլուծվել և գնահատվել են համայնքի ֆինանսական, աշխատանքային, նյութատեխնիկական ռեսուրսներն ու տնտեսական հնարավորությունները: Առաջադրվել են ծրագրային աշխատանքներ, որոնցում տրվել են առկա հիմնախնդիրների նկարագրությունները, լուծման ուղիները, պահանջվող ֆինանսական միջոցները, ֆինանսավորման աղբյուրները, ակնկալվող արդյունքները և կատարման ժամկետներն ու պատասխանատուները: Կատարվել են իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են համայնքի ներկա իրավիճակը բնութագրող վիճակագրական տեղեկություններ:

ՀԶՀՕ-ն ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում արտաքին ու ներքին գործոնների ազդեցությունից կախված կարող են ենթարկվել փոփոխությունների ու լրացումների:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թուրքական դարավոր բռնատիրությունից ազատագրվելու համար 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին բնակավայրի նախնիները Արևմտյան Հայաստանից զանգվածաբար գաղթել են Արևելյան Հայաստան: Դա մի տեղաշարժ է եղել անկախությունը կորցրած հարազատ հայրենիքի մի վայրից մյուսը:

1829 թվականի սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլիսի հաշտության պայմանագրով Արևելյան Հայաստանը միանալով Ռուսաստանին՝ կարողացավ ապահովել իր խաղաղ գոյակցությունը:

Ըստ տոհմագրական տվյալների՝ գյուղը հիմնադրել է 1828-1830 թվականներին Արևմտյան Հայաստանի Կարսի նահանգի Բերտիկլեր գյուղից գաղթած 13 ընտանիքների կողմից / 34 տղամարդ և 36 կին/: 1915-1918 թթ. գյուղում բնակություն են հաստատել Սուշի գավառից գաղթած ևս 7 ընտանիք:

Թուրքերը իրենց տիրապետության սահմաններում թուրքացրել են տեղանունները՝ անկախ բնակավայրի էթնիկական կազմից: Սարակապը մինչև 19-րդ դարասկիզբը անվանվել է Բոզդողան, որը թարքմաբար նշանակում է՝ «»:

1890 թվականին գյուղում հիմնադրվել է ծխական դպրոց:

1918-1920-ական թվականների թուրք հրոսակների արշավանքների հետևանքով Արևելյան Հայաստանի գյուղերի ու քաղաքների մեծ մասը կողոպտվել ու ավերվել են: 1918 թվականին նշված հրոսակախմբերը մեծ ոճրագործություններ են իրականացրել Կարսում, Շիրակում, Լոռի-Փամբակում և Հայաստանի այլ շրջաններում:

Այդ ողբերգական, արյունալի էջերից անմասն չի մնացել նաև Սարակապ գյուղը: Գյուղը մեծ սիրով ապաստան է տվել թուրքական յաթաղանից փրկված ավելի քան 100 արևմտահայ գաղթական ընտանիքների, որոնք հետագայում տեղափոխվել են հանրապետության այլ բնակավայրեր:

Ըստ հայտնաբերված հնագիտական հուշարձանների տեղագրության՝ տեղանքը բնակեցված է եղել դեռևս վաղ բրոնզե դարում:

Բնակավայրի տարածքում պահպանվել են պատմամշակութային տարբեր արժեքներ: Բնակավայրի արևելյան կողմում պահպանվել են իրար դիմաց գտնվող փոքր բլուրների գագաթներին առկա ուրարտական ամրոցների պարիսպների մնացորդները, որոնք ունեն մեծ որձաքարերի անմշակ շարվածք: Գյուղամիջում կանգուն է «Սուրբ Աստվածածին» կոչվող եկեղեցին, որը ըստ հնագիտական եզրակացության հանդիսանիում է 6-րդ դարի կառույց:

Բնակավայրի հիմնադրումից ի վեր բնակչության հիմնական զբաղմունքը եղել և մնում է հողագործությունն ու անասնապահությունը: Առանձին տնտեսություններ զբաղվում են թռչնաբուծությամբ, մեղվապահությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ:

Բնակավայրն իր զարգացումն հիմնականում ապրել է 1930-ական թվականներից հետո: Գյուղում կառուցվել է ութնամյա դպրոց, ակումբ, գրադարան, առևտրի և սպասարկման տարբեր օբյեկտներ: Կայուն տնտեսական աճ է ունեցել

Սարակապի կոլեկտիվ տնտեսությունը, աչքի է ընկել անջրդի պայմաններում բարձր բերքատվությամբ և որակի ցորենի արտադրությամբ:

Համայնքը բոլոր ժամանակներում մեծ կարևորություն է տվել սերունդների կրթության և դաստիարակության հարցերին: Համայնքը գիտության, մշակույթի և արվեստի ոլորտներում տվել է տասնյակից ավել մշանավոր մարդիկ:

1887թվականից Սարակապը գտնվել է Ալեքսանդրապոլի գավառի կազմում: 1921թ. բնակավայրը ընդգրկվել է Խորհրդային Հայաստանի կազմում և 1996 թվականը ընդգրկված է եղել Անիի շրջանի կազմում: 1996թվականին Հայաստանի Հանրապետության վարչատարածքային վերջին բաժանումից հետո Սարակապը, որպես վարչական առանձին միավոր՝ ինքնուրույն համայնք, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կազմում:

Խարակապը ակտիվ մասնակցություն է ունեցել Հայրենական Մեծ պատերազմին և Արցախյան ազատամարտին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՂՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ

Սարակապի գյուղական համայնքը տեղաբաշխված է Արագած լեռան արևմտյան ստորոտում, Շիրակի դաշտի հարավ-արևմտյան և Թալինի սարավանդակի հյուսիսային մասում:

Հյուսիսից սահմանակից է ՀՀ Շիրակի մարզի Աղինի, հարավից՝ Բագրավանի, արևելքից Քարաբերդի և Չիթհանքովի, արևմուտքից՝ Ջրափիի համայնքների վարչական տարածքներին:

Տարածքը ծովի մակերևույթից գտնվում է 1600 մ. բարձրության վրա և ընդգրկված է հանրապետության նախալեռնային բնակավայրերի ցանկում:

Բնակավայրին առանձնահատուկ են ցուրտ, ձյունառատ ձմեռները և զով ամառային եղանակները: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 10 - 12 աստիճան: Տարեկան միջին տեղումները կազմում են 350-500մմ, որոնք առանձնահատուկ են ապրիլ-հունիս և հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Բնակավայրի վարչատարածքը մշտապես վտանգված է կարկտահարությամբ և տևական երաշտով: Տարածքը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում: Հիշարժան են 1926 և 1988թթ. աղետալի երկրաշարժերը:

Համայնքի վարչական տարածքը զբաղեցնում է 2626.9 հա., որից 2534.3 հա գյուղատնտեսական մշակակության հողերն են, բնակավայրերի հողերի կազմում են 27.4 հա, արդյունաբերական, արտադրական մշակակության հողերը 3.9 հա, պատմամշակութային հողերը՝ 36.7 հա, իսկ մնացածը՝ ճանապարհների, կոմունալ ենթակառուցվածքների, ընդհանուր օգտագործման և այլ մշակակության հողերն են:

Բնակավայրը գտնվում է նախկին շրջկենտրոնից 38 կմ., մարզկենտրոնից 33կմ. և մայրաքաղաքից՝ 120 կմ. հեռավորության վրա: Բնակավայրից 4 կմ հեռավորությամբ է անցնում Գյումրի-Արմավիր հանրապետական մշակակության ճանապարհը: Բնակավայրը Աղին երկաթուղային կայարանից գտնվում է 7 կմ հեռավորության վրա:

Տարածքում գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը:

1.3 ԺՈՂՈՎՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ըստ տոհմագրական տվյալների՝ Սարակապ գյուղը հիմնադրել է 1828-1830 թվականներին Արևմտյան Հայաստանի Կարսի և Մուշի գավառներից գաղթած ընտանիքների կողմից: Հետագայում գյուղը համալրվել է 1915 թվականի եղեռնից փրկված գաղթական ընտանիքներով: Բնակավայրը հիմնականում զարգացում է ապրել Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետո: Մինչև Հայրենական Մեծ պատերազմը գյուղն ունեցել է 280 տնտեսություն՝ շուրջ 1500 բնակչությամբ:

Հայրենական Մեծ պատերազմից հետո գյուղի բնակչության թիվը կտրուկ նվազել է: Հետպատերազմյան ժամանակաընթացում համայնքը առավելագույն բնակչություն՝ շուրջ 1200 մարդ է ունեցել 1980-1985 թվականներին:

Վերջին 20 տարիներին համայնքի բնակչության թիվը նվազել է շուրջ 300 մարդով, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների թիվը նվազել է կրկնակի չափով և արձանագրվել է բնակչության կազմի ծերացում: Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 15-20 տոկոսը մեկնում են սեզոնային արտագնա աշխատանքի, շարունակվում է հատկապես երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

Համայնքի բնակչության կազմն ըստ տարիքային և սոցիալական խմբերի

2016թ. հունվարի 1-ի դրությամբ / մարդ /.

- Ընդամենը՝ մշտական բնակչություն – 641

Այդ թվում՝ տղամարդ – 320, Կին՝ – 31

Տնային տնտեսությունների թվաքանակը՝ 151

- Առկա բնակչություն - 625
- Առկա տնային տնտեսությունների թվաքանակը - 129
- Նախադպրոցական տարիքի երեխաներ / 0 – 5 տարեկան / – 38
- Դպրոցական տարիքի երեխաներ / 6 – 17տարեկան / – 126
- Հասուն տարիքի բնակչություն / 19-64 և ավելի / – 427
- Տարեց բնակչություն / 65 և ավելի / – 50
- Ընտրողների թիվը – 488
- Կենսաթոշակառուների թիվը - 50
- Հաշմանդամներ – 18
այդ թվում՝
 - Մանկուց հաշմանդամներ – 2
 - Միակողմանի ծնողագուրկ երեխաներ – 5
 - մինչև 6 տարեկան երեխա ունեցող ընտանիքներ - 32
 - Նպաստառու ընտանիքներ – 15
 - 0-16 տարեկան 3 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներ – 16
 - Միայն ծերերից կազմված ընտանիքներ - 2
 - Ազատամարտիկներ – 2
 - Փախստականներ – 0
 - Աշխատունակ բնակչություն – 497
 - Ջբաղբածների թիվը - 467
 - Այլազգիներ – 1
 - Գործազուրկների թիվը – 30
 - Միջին տարեկան ծնունդը 6-7
 - միջին մահացությունը՝ 4-5

Համայնքի բնակչության բաշխումն ըստ զբաղվածության հիմնական ճյուղերի /մարդ /

- Գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 347
- Վարձու աշխատանք գ/տ ոլորտում – 27
- Վարձու աշխատանք ոչ գ/տ ոլորտում,մասնավոր - 3
- Վարձու աշխատանք ոչ գ/տ ոլորտում,պետական – 35
- Ոչ գ/տ ինքնազբաղվածություն – 3
- Ուսանողներ - 4
- Բանակում ծառայողներ – 19

Համայնքում զբաղվածների բաշխվածությունն ըստ ոլորտների

- Արդյունաբերություն /այդ թվում գյուղատնտեսական հունք վերամշակող/ - 12
- Գյուղատնտեսություն – 347
- Ծառայություններ – 27
այդ թվում՝ առևտուր - 2
գյուղատնտեսական ծառայություններ – 25
- Կրթություն – 21
- Առողջապահություն – 1
- տեղական ինքնակառավարում - 6

- Այլ ոլորտներ – 44
- Արտագնա աշխատանքի մեկնողների թիվ - 20

Համայնքի հասուն տարիքի բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի

- Տարրական – 3
- Հիմնական – 71
- Միջնակարգ - 323
- Միջնակարգ մասնագիտական – 59

Բարձրագույն - 22

1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի / ավագանու 5 անդամ / և համայնքի ղեկավար: Համայնքի ավագանին իր լիազորությունները ստանձնել է 2008թ. նոյեմբերի 12-ին: 2011թվականի Մարտի 27-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով, առաջադրված երկու թեկնածուներից համայնքի ղեկավար է վերընտրվել Արծրուն Խաչատրյանը, ծնված 1972թ., ունի բարձրագույն կրթություն, ԲՀԿ անդամ է 2008 թվականից: Համայնքի ղեկավարի պաշտոնում առաջին անգամ ընտրվել է 2007 թվականին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

N	Անունը, ազգանունը	Ծննդ.թիվը	Կրթություն	Կուս. պատկան.	Լիազորությունների ստանձնման ժամկետը	Որերորդ անգամն է ընտրվել
1.	Միսակ Ծառուկյան	1970թ.	բարձրագույն	ԱճԿ.	14.09.2020թ.	5
2.	Կիրակոսյան Աղասի	1974թ.	բարձրագույն	ԱճԿ.	14.09.2020թ.	1
3.	Պետրոս Գրիգորյան	1967թ.	միջնակարգ	ԱճԿ.	14.09.2020թ.	4
4.	Հրաչյա Մակարյան	1957.թ.	միջնակարգ	ԱճԿ.	14.09.2020թ.	2
5	Անդրանիկ Ծառուկյան	1983թ.	բարձրագույն	ՀՀԿ	14.09.2020թ.	2

« Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավարի աշխատակազմ հետևյալ կազմով.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԿԱՎՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՏԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Հ/հ	Պաշտոնի դասակարգումը	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույթաչափը /դրամ/	Տոկոսը՝ համայնքի ղեկավարի աշխատավարձի նկատմամբ
<i>Քաղաքական պաշտոն</i>					
1.	Համայնքի ղեկավար	Արծրուն Խաչատրյան	1	200 000	X
<i>Համայնքային ծառայության պաշտոններ</i>					
1.	Աշխատակազմի քարտուղար	Հասմիկ Գալստյան	1	161 700	77.0
2.	Առաջատար մասնագետ-հաշվապահ	Մինաս Ստեփանյան	1	159 600	76.0
3.	Առաջատար մասնագետ	Մեխակ Հակոբյան	1	94 500	45.0

Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ

1.	Հավաքարար	Մարզարիտ Առաքելյան	1	72 760	36.38
Համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակը՝ 5 միավոր					

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն համայնքում կազմավորվել են մշտական գործող հետևյալ հանձնաժողովները՝

- Վարչական հարցերի հանձնաժողով
- Անչափահասների հարցերի հանձնաժողով
- Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողով
- Սոցիալական ապահովության հարցերի հանձնաժողով:

Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ներքին հարաբերությունների սխեման ներկայացված է հավելվածի տեսքով /հավելված 1/

1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 1997թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին» թիվ 51 որոշմամբ:

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի:

Քայքայված և անմխիթար վիճակում են մշակույթի տունը, ջրամատակարարման ներքին ցանցը, ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները: Վերանորոգման կարիք ունի գյուղապետարանի շենքը, բուժ. մանկաբարձական կետը, եկեղեցին, բնակավայրի գիշերային լուսավորության ցանցը: Նորացման կարիք ունի գյուղապետարանի և գրադարանի գույքը: Համայնքը չունի մարզական և երաժշտական խմբակների ուսուցման համար համապատասխան շենքային և գույքային հարմարություններ, բնակչության հանգստի և ազատ ժամանցի համար խաղասրահներ:

«Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության» ծրագրերի (ԻՖԱԴԻ) շրջանակներում 2009թ. գազի ֆիկացվել է բնակավայրը, ընթացքի մեջ է սպառիչ ցանցի կառուցման աշխատանքները:

«Լինսի հիմնադրամի» միջոցներով 2011 թվականին համայնքում կառուցվել է հոյակերտ դպրոց և այն հագեցվել ժամանակակից գույքով, հանդերձանքով և սարքավորումներով: Շենքում համապատասխան հարմարություններ են ստեղծվել նաև դպրոցական նախակրթարանի համար:

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՍԱՐԶԻ ՍԱՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԿՈՂ ԳՈՒՅՔԻ

Հ Հ	Գույքի անվանումը	Չափի միավոր ը	Քան ակը	Միավորի Արժեքը Հազ.դրամ	Ընդ. Արժեքը Հազ.դրամ	Թվա կանը	Տեխնիկական Վիճակի նկարագրություն
1	Ջրագրծ վերին աղբյուրի	հատ	1	41.4	41.4	1882	գործող
2	Ջրագիծ ներքին աղբյուրի	հատ	1	28.3	28.3	1983	գործող
3	Ջրավազան կայում	հատ	1	95.9	95.9	1986	անօգտագործելի
4	Նոր ակումբ	հատ	1	15600.1	15600.1	1990	Կիսակառույց, քայքայվ. Չի օգտագործվում
5	Տնակ բենզինի լիցքավորման	հատ	1	118.6	118.6	1980	Տրված վարձակալությ.
6	Տրանսֆորմատոր կայում	հատ	1	66.7	66.7	1981	անօգտագործելի
7	Լիցքավորման սարք, դիզ. վառ.	հատ	1	19.8	19.8	1980	Անօգտագործելի
8	Լիցքավորման սարք, բենզինի	հատ	1	19.9	19.9	1989	անօգտագործելի
9	Ռեզերվուար 10խոր/մ	հատ	1	11.4	11.1	1963	Կոռոզիայի ենթարկված
10	Ռեզերվուար 5խոր/մ	հատ	1	5.6	5.6	1963	Կոռոզիայի ենթարկված
11	Ռեզերվուար 2խոր/մ	հատ	1	4.6	4.6	1969	Կոռոզիայի ենթարկված
12	Ռեզերվուար 10խոր/մ	հատ	1	7.6	7.6	1969	Կոռոզիայի ենթարկված

13	Ռեգերվուար	10խոր/մ	հատ	1	8.0	8.0	1980	Կոռոզիայի ենթարկված
14	Ռեգերվուար	5խոր/մ	հատ	1	5.7	5.7	1982	Կոռոզիայի ենթարկված
15	Ռեգերվուար	5խոր/մ	հատ	1	11.4	11.4	1990	Կոռոզիայի ենթարկված
16	Ռեգերվուար	5խոր/մ	հատ	1	11.6	11.6	1990	Կոռոզիայի ենթարկված
17	Գյուղապետարանի շենք		հատ	1	10771.3	10771.3	1965	Հիմնանորոգման ենթակա
18	Տրանսֆորմատոր հեռուստա- Հաղորդման ապարատի		հատ	1	104.3	104.3	1990	գործող
19	Տնակ հեռուստահաղորդման Ապարատի համար		հատ	1	21.5	21.5	1990	շահագործվում է
20	Հեռուստահաղորդ. ապարատ		հատ	1	250.0	250.0	1990	Աշխատող, նորոգ. ենթակա
21	Էլ. հաղորդ. ցանց, հեռուստա- Հաղորդ. ապարատի համար				54.7	54.7	1990	գործող
22	Ներհամայնք. ոռոգման ցանց	Կ.մ	4.3	2.37	10.2	1992	Մասնակի թալանված	
23	Ողավոյի կշեռք կայում	հատ	1	-	-	1971	Ամբողջովին թալանված	
24	Ավտոմատ մխոցներ ոռոգման համա	հատ	1	-	-	1990	Ամբողջովին թալանված	
25	Բնակելի տներ	հատ	7	-	23.0	2004	կիսակառույց	
26	Բնակելի շենք յուրաքանչյուրը 2 բնակարանով	հատ	2	-	-		Առանց հաշվեկշռային արժեքի	
27	Զրհան պոմպակայան	հատ	1	-	-	2002	Գործող, 0.8/վ արտադրողակ.	
28	Համակարգչային սարգավորումներ, այդ թվում	-	-	-	-	-		
28/1	Համակարգիչ intel E2200 Dual Core	Հատ	1	130500	130500	2009	նոր գնված, օգտագործվող	
28/2	մոնիտոր Samsung 953BW	Հատ	1	86600	86600	2009	նոր գնված, օգտագործվող	
28/3	ստեղնաշար KB220/ մկնիկ NS- 120/դիմամիկ SP-N120	Հատ	1ակա ն	9400	9400	2009	նոր գնված, օգտագործվող	
28/4	անխափան սնուցման սարք UPS 600	Հատ	1	22000	22000	2009	նոր գնված, օգտագործվող	
28/5	տպիչ XSEROX WC3119	Հատ	1	95500	95500	2009	նոր գնված, օգտագործվող	
28/6	հիշողություն USB flash 4GB	հատ	1	5000	5000	2009	նոր գնված, օգտագործվող	

Գրասենյակային գույք

1	սեղան	հատ	3	-	-	1965	հնամաշ
2	Մետաղյա պահարան	հատ	3	-	-	-	հնամաշ
3	Դիմադիր սեղան	հատ	1	-	-	-	հնամաշ
4	վիշիկկա	հատ	1	-	-	-	չկա
5	տմբուշկա	հատ	2	-	-	-	չկա
6	ռադիոդիմամիկ	հատ	2	-	-	-	չկա
7	հեռախոս	հատ	3	-	-	-	չկա
8	համրիչ	հատ	1	-	-	-	օգտագործելի
9	հեռախոս	հատ	3	-	-	1997	Առկա է 1հատ, անօգտագործելի

Գրադարանի գույք

1	Երկաթյա գրադարակ	հատ	24	-	-	-	օգտագործելի
2	ընթերցասեղան	հատ	4	-	-	-	օգտագործելի
3	Երկաթյա աթոռ	հատ	2	-	-	-	օգտագործելի
4	փոշեծծիչ	հատ	1	-	-	-	անօգտագործելի
5	էտաժերկա	հատ	1	-	-	-	անօգտագործելի
6	գրասեղան	հատ	1	-	-	-	օգտագործելի
7	ցուցավիեղկ	հատ	1	-	-	-	օգտագործելի
8	քարտարկղ	հատ	1	-	-	-	գտագործելի
9	ռադիոպրոմմիկ	հատ	1	-	-	-	անօգտագործելի
10	ժամացույց	հատ	1	-	-	-	անօգտագործելի
11	դաշնամուր	հատ	1	-	-	-	անօգտագործելի
12	Երկաթյա գրադարակ	հատ	4	-	-	-	գտագործելի
13	ռադիո	հատ	1	-	-	-	անօգտագործելի
14	վարագույր	հատ	6	-	-	-	անօգտագործելի
15	գրականություն	հատ	7800	-	-	-	գտագործելի

1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿ ԱՅՐԻ ՊԱՂԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնակավայրը չունի կեղտաջրերի և արտաքին ջրերի հեռացման համակարգեր: Հեղեղատարի բացակայության պատճառով բնակավայրի առանձին թաղամասեր գարնան ձնհալի ժամանակահատվածում վտանգված են հեղեղումների:

Համայնքը կոյուղացված չէ և կեղտաջրերի հեռացումը կատարվում է անհատական խորքային հորերի միջոցով: Բնակավայրում աղբահանությունը կատարվում է համայնքի բնակիչների կողմից կամ համայնքում կազմակերպվող սանիտարական մաքրման օրերի միջոցով: Բնակավայրը նպատակային նշանակության աղբատեղի չունի:

Սակավ է համայնքի կանաչապատ և ծառատունկ տարածքները: Բնակավայրը չունի կառուցապատ հանգստի գոտի: Հատկապես ամռան ժամանակաշրջանում բարձր է օդի աղտոտվածությունը:

Բնակավայրում վտանգավոր արտանետումներ չկան:

1.7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում առկա է համայնքի բնակչության սեփականությունը հանդիսացող 120 անհատական առանձնատուն՝ 15642 ք.մ ընդհանուր մակերեսով և բազմաբնակարան 2 բնակելի շենք՝ 4 բնակարանով, 348 ք.մ. ընդհանուր մակերեսով: Բնակավայրը գտնվելով 1988թ. «Սպիտակի» աղետալի երկրաշարժի գոտում և համայնքի բնակֆոնդի մոտ 30%-ը ունեն 2-3 աստիճանի վնասվածություն: Երկրաշարժի հետևանքով անօթևանի կարգավիճակ ունեն 6 ընտանիքներ, որոնք շուրջ 23 տարի է ինչ բնակվում են վագոն-տնակներում և հարմարեցված կացարաններում: Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն համայնքի թվով 16 երիտասարդ ընտանիքներ:

Համայնքում կա 8 բնակելի առանձնատների անավարտ շինարարություն, որոնց շինարարությունը սկսվել է երկրաշարժից հետո և միջոցների բացակայության պատճառով մինչև օրս չի ավարտվել:

Համայնքի բնակարանային տնտեսությունն ունի հետևյալ տեսքը.

Հ/հ	Բնակարանային տնտեսության բնութագրիչներ	Շենքերի քանակը / հատ /	Բնակարանների /բն.տների/ քանակը / հատ /	Ընդհանուր բնակմակերեսը / քառ.մ. /
1	Համայնքային սեփականության բազմաբնակարան բնակելի շենքեր	2	4	348
	1 սենյականոց բնակարաններ	-	-	-
	2 սենյականոց բնակարաններ	-	-	-
	3 սենյականոց բնակարաններ	2	4	348
	4 և ավել սենյականոց բնակարաններ	-	-	-
2	Կառուցման ժամկետները	-	-	-
	Մինչև 10տարի առաջ կառուցված	-	-	-
	11-20տարի առաջ կառուցված	-	-	-
	21-50տարի առաջ կառուցված	2	4	348
	50 և ավելի տարի առաջ կառուցված	-	-	-
3	Անհատական առանձնատներ	120	120	15642
	Ըդհանուր միջին մակերեսը	x	x	125.4
	ԸՆԴԱՄԵՆԸ ԲՆԱԿՖՈՆԴ	122	124	15990

1.8. ԽՄԵԼՈՒ և ՈՐՈՂՍԱՆ ԶՈՒՐ

Համայնքի խմելու ջուրը մատակարարվում է բնակավայրում առկա բնական աղբյուրից՝ ինքնահոս եղանակով, 1-1.5 լիտր/ վրկ. հզորությամբ: Բնակչության խմելու ջրով ապահովվածությունը կազմում է 10 տոկոս: Բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է բնակավայրի տարբեր թաղամասերում տեղադրված 3 բնական աղբյուրների միջոցով: Բնակությունը խմելու և կենցաղային կարիքների համար ջուրը տեղափոխում է դույլերով, սայլակներով և սահնակներով: Բնակավայրի ջրամատակարարման ներքին ցանցն ունի ընդամենը 500մ. երկարություն: Համայնքի ներկայիս շահագործվող ներտնտեսային ցանցը կառուցվել է 1950-1960թթ. և նրա առանձին հատվածների քայքայվածության պատճառով հաճախակի են ջրագծի վթարները, ջրի կորուստները և աղտոտումները:

Բնակավայրն ունի խմելու համար պիտանի արտեզյան ջրերի հարուստ պաշարներ: 70-80-ական թվականներին խորքային պոմպի միջացով այդ ջրերը օգտագործվել են ինչպես Սարակապի կոլտնտեսության, այնպես էլ համայնքի բնակչության խմելու ու կենցաղային կարիքների համար: Այն օգտագործվել է նաև բնակչության տնամերձ հողամասերի

ուղղման նպատակով: Հետագայում պոմպակայանը շարքից դուրս գալու և հորատանցքը փակվելու պատճառով պոմպակայանը չի շահագործվել: Համայնքը սեփականության իրավունքով ունի նաև 500 խ.մ. տարողության օրական կարգավորման ջրամբար, որը պոմպակայանի և ջրամատակարարման ներքին ցանցի առկայության դեպքում կարող է շահագործվել և բնակչությանը ապահովել շուրջօրյա ջրամատակարարում:

Ըստ նախնական հաշվարկների, խորքային հորի հորատման, պոմպի տեղադրման և 2000 գծ. մ. ընդհանուր երկարության ներքին ցանցի կառուցման համար կպահանջվի շուրջ 30 մլն. դրամի ներդրում, որը համայնքի բյուջեի սահմանափակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել:

Խմելու ջրի որակը, որը պարբերաբար ուսումնասիրվում է հակահամաճարակային ծառայության կողմից, բնութագրվում է բավարար և խմելու համար պիտանի:

Համայնքը չունի ոռոգման համակարգ:

Բնակավայրից 5կմ հեռավորության վրա է գտնվում Ախուրյանի ջրամբարը և Ջրափիի պոմպակայանի վերականգնման և ոռոգման ներքին ցանցի կառուցման դեպքում ջրամբարի ջրային ռեսուրսները կարող են օգտագործվել համայնքի շուրջ 200 հա վարելահողերի ոռոգման համար: Ոռոգման կարիքների համար կարող են օգտագործվել նաև համայնքում առկա արտեզյան ջրերի պաշարները, որը գտնվում է 60-70 մ. խորության վրա:

1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ

Բնակավայրը Գյումրի-Արմավիր հանրապետական նշանակության ճանապարհից գտնվում է 4 կմ, Մարալիկ քաղաքից՝ 38 կմ, մարզկենտրոնից՝ 33 կմ, իսկ մայրաքաղաքից՝ 120 կմ հեռավորության վրա: Մոտակա երկաթուղին Աղինի երկաթուղային կայարանն է, որը բնակավայրից գտնվում է 6 կմ հեռավորության վրա:

Համայնքի բնակչության փոստային սպասարկումն իրականացվում է Աղինի փոստային բաժանմունքի կողմից:

Բնակչությունը օգտվում է «ԱՐՄԵՆՏԵԼ» ալեհավաքային ֆիքսված հեռախոսակապից, «ԱՐՄԵՆՏԵԼ», «ՎԻՎԱՍԵԼ USU» և «ՕՐԱՆՇ» բջջային հեռախոսակապերից:

Խիստ քայքայված և անբարեկարգ վիճակում են ներհամայնքային շուրջ 3 կմ. ընդհանուր երկարության ճանապարհները: Վերանորոգման կարիք ունի բնակավայր մայրուղի միջհամայնքային ճանապարհը: Քայքայված են նաև համայնքի վերին գոտու դաշտամիջյան ճանապարհների առանձին տեղամասերը, որի պատճառով համայնքի գյուղացիական տնտեսությունների համար լուրջ դժվարություններ են ստեղծվում դաշտավարական աշխատանքների իրականացման շրջանում:

Անբավարար է համայնքի հեռուստահաղորդումների որակը: Բնակավայրն ընդունում է սահմանափակ թվով հեռուստաալիքներ:

Բնակավայրից ք. Մարալիկ և ք. Գյումրի տրանսպորտային կապը ապահովվում է միկրոավտոբուսի օրական մեկ երթուղիների միջոցով: Մայրաքաղաքի և հարևան համայնքների հետ կապը ապահովվում է Գյումրի քաղաքի երթուղիների միջոցով:

Անձնական սեփականության տրանսպորտային միջոցով ապահովված են համայնքի տնային տնտեսությունների 20 տոկոսը:

1.10.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է, որը սակայն չի հանգեցրել սոցիալական այնպիսի ինստիտուտների ձևավորմանը, ինչպիսիք են միավորումները, նախաձեռնող խմբերը, բարեգործական և հասարակական կազմակերպությունները: Բնակչությունը սերտ կապեր ունի մարզկենտրոնի, նախկին շրջկենտրոնի և շրջակա բոլոր համայնքների հետ:

Համայնքը համագործակցում է հանրապետությունում գործող քաղաքական և հասարակական կազմակերպությունների, հանրապետական և միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ:

Համայնքը անդամակցում է «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը, համագործակցության կապեր է հաստատել «Լինսի հիմնադրամի» հետ:

Հոգևոր ուղորտում համայնքը համագործակցում է Շիրակի Թեմի Առաջնորդարանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

1.11.ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2626.9 հա. է, որից՝ պետական հողեր՝ 38.2հա:

1. Գյուղատնտեսական նշանակության հողեր – 2534.3 հա.

այդ թվում՝

- վարելահող - 730.1 հա., որից սեփականաշնորհված՝ 602.8 հա

- արոտ - 1790.0 հա.
 - գյուղատնտեսական նշանակության այլ հողեր - 14.2 հա.
 - 2. Բնակելի շինությունների տակ հողեր – 27.4հա.
 - 3. Արդյունաբերական, արտադրական շինությունների տակ հողեր – 3.9հա.
 - 4. Ճանապարհների տակ հողեր - 1.6 հա.
 - 5. Առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր – 36.7 հա.
 - 6. Հասարակական կառուցապատման, ընդհանուր օգտագործման կոմունալ ենթակառուցվածքների հողեր – 2.3 հա.
 - 7. Պետական սեփականության հողերը կազմում են – 37.2հա
- Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերը համայնքի գյուղացիական տնտեսությունների կողմից օգտագործվում են ամբողջությամբ:

1.12.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքում առկա է տուֆ քարի և բազլտի զգալի պաշարներ և անհրաժեշտ ներդրումներ կատարելու դեպքում այս ճյուղը կարող է զարգանալ, ապահովելով զգալի թվով աշխատատեղեր:

1.13.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը հացահատիկային կուլտուրաների մշակությունն ու անասնապահությունն է:

Ոռոգելի հողատարածքների և հակակարկտային կայանքների բացակայության պատճառով համայնքը լուրջ դժվարությունների առաջ է կանգնած գյուղատնտեսական մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու համար:

Կուլտնտեսության լուծարումից հետո, համայնքում կազմավորվել են շուրջ 150 գյուղացիական տնտեսություններ, որոնց կողմից մշակվում է 730.1 հա., վարելահող, որից 602.8 հա. հանդիսանում է համայնքի գյուղացիական տնտեսությունների սեփականությունը, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող 127.2 հա վարելահողը համայնքի 42 տնտեսությունների կողմից օրենքով սահմանված կարգով օգտագործվում են վարձակալությամբ: Սեփականաշնորհված վարելահողերի 1 հողաբաժինը կազմում է 2.2 հա, մեկ տնտեսության կողմից միջին հաշվով մշակվում է 4.5 հա վարելահող:

Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կերային մշակաբույսերի, մասամբ կարտոֆիլի, կաղամբի և բանջարա- բոստանային այլ կուլտուրաների մշակությամբ: Չունենալով ոռոգելի վարելահողեր՝ գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետությունը ուղակիորեն կախված է բնակլիմայական պայմաններից: Ցանքատարածությունները մշտապես վտանգված են երաշտով, կարկտահարությամբ և ցրտահարությամբ: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմանների դեպքում կազմում է 30-40 ցեցտներ, իսկ երաշտի, ցրտահարության կամ կարկտահարության դեպքում կորուստը կազմում է 50-100%: Տարածաշրջանում համայնքը աչքի է ընկել անջրդի պայմաններում բարձր որակի ցորենի արտադրությամբ:

Գյուղացիական տնտեսությունների կողմից պահվում է 580 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում կովեր՝ 369 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 878, խոզեր՝ 137 գլուխ, հավեր 2357, մեղվափեթակներ՝ 81: Ցածր է տնտեսությունների կերապահովվածությունը, անասնաբուժական և անասնաբուժական միջոցառումների որակը: Համայնքի գյուղացիական տնտեսությունները տոհմային ցեղատեսակների նորացման կարիք ունեն:

Համայնքի բնակչության կողմից սպառվում է ստացված գյուղատնտեսական արտադրանքի մինչև 70 տոկոսը: Գյուղում կա թրթուրավոր և անվավոր 19 տրակտոր, 2 կոմբայն, 1 խոտհնձիչ, 19 բեռնատար ավտոմեքենա, տասնյակ գյուղ մեխանիզմներ ու գործիքներ: Գյուղատնտեսական մեքենաներն ու մեխանիզմները բարոյապես ու ֆիզիկապես մաշված են, կա պահեստամասերի մեծ պահանջարկ:

Ոռոգման համակարգի կառուցման, հակակարկտային կայանքների տեղադրման, գյուղատնտեսական մեքենաների ու մեխանիզմների նորացման դեպքում համայնքի գյուղատնտեսության ոլորտը կարող է կտրուկ զարգանալ:

Համապատասխան ներդրումների առկայության դեպքում համայնքում կարող է զարգանալ նաև գյուղատնտեսական մթերքների վերամշակման ճյուղը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Համայնքի գյուղացիական տնտեսությունների կողմից օգտագործվող Գյուղատնտեսական նշանակության հողերը

Հողատեսքի անվանումը	2016թ	
	Առկա հողերը /հա/	որից օգտագործվող /հա/
Ընդամենը գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝	2534.3	2534.3
Վարելահող	730.1 հա.	730.1 հա.
Բազմամյա տնկարկներ	0	0
Խոտհարքներ	0	0
Արոտավայրեր	1790.0	1790.0
Այլ գյուղատնտեսական հողեր	14.2	-

2. Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը

Ցանքատարածությունների կառուցվածքը	2016թ.	
	հա	%
Ցորեն	320	30
Գարի	300	36
Բանջարեղեն	0	0
Կարտոֆիլ	0	0
Պտղատու այգիներ	0	0
Կերային մշակաբույսեր	10	5.6
Ընդամենը	630	76.7

3. Հիմնական մշակաբույսերի համախառն բերքը և բերքատվությունը

Մշակաբույսերի տեսակները	2016թ.
Հացահատիկային	մշակաբույսեր
Համախառն բերքը, տոննա	33
1 հա -ի միջին բերքատվությունը, տոննա	
Կարտոֆիլ	
Համախառն բերքը, տոննա	0
1 հա -ի միջին բերքատվությունը, տ/հա	0
Բանջարեղեն	
Համախառն բերքը, տոննա	0
1 հա -ի բերքատվությունը	0
Կերային	մշակաբույսեր
Համախառն բերքը, տոննա	100.0
1 հա -ի բերքատվությունը	33

4 Անասնազխաքանակը

/գլուխ/

Գյուղատնտեսական կենդանիների տեսակները	01.01.2016թ.
Խոշոր եղջերավոր անասուններ	621
որից՝ կովեր	345
Խոզեր	500
Ոչխարներ և այծեր	978
Թռչուններ	2177
Մեղվաընտանիքներ	97

5. Անասնապահական մթերքների արտադրության ծավալները և անասունների մթերատվությունը

Անասնապահական մթերքի տեսակը	2016թ.
Մսի արտադրություն, տոննա	26.0
Կաթի արտադրություն, տոննա	550.0
Բրդի արտադրություն, տոննա	2.0
Ձվի արտադրություն, հազ. հատ	300.0
1 կովի կաթնատվությունը, կգ	1500
1 ոչխարի բրդատվությունը, կգ	2.6
1 հավի ձվատվությունը, հատ	150

6. Համայնքում առկա գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ

Գյուղ. մեքենայի, գործիքի անվանումը	Չափի միավոր	Քանակը
Թրթուրավոր տրակտոր	հատ	7
Անվավոր տրակտոր	հատ	12
Հացահատրկային կոմբայն	հատ	2
Խոտհնձիչ կոմբայն	հատ	1
Բեռնատար ավտոմեքենա	հատ	29
Տրակտորային կցասայլ	հատ	6
Գութան	հատ	5
Կուլտիվատոր	հատ	4
Շարքացան	հատ	6
Հակավորող մեքենա	հատ	4
Հատիկազտիչ մեքենա	հատ	1

Համայնքն ունի հանրակրթական մեկ դպրոց, որտեղ սովորում են 99 աշակերտներ: Դպրոցում աշխատում են 20 մանկավարժներ, որոնցից 17-ն ունեն բարձրագույն կրթություն: Դպրոցի շենքը 2011 թվականին վերակառուցվել է «Լինսի հիմնադրամի» միջոցներով և ունի 250 աշակերտ/տեղ: Դպրոցը հագեցված է ժամանակակից սարքավորումներով, գույքով և կահավորանքով: Նրանում անհրաժեշտ պայմաններ են ստողծված 28 տեղանոց դպրոցական նախակրթարանի համար:

Համայնքի միակ մշակութային օջախը 1990 թվականին շինարարական որոշակի թերություններով շահագործման հանձնված մշակույթի տունն է, որը ժամանակին չի հագեցվել անհրաժեշտ գույքով և երբևէ չի շահագործվել: Ներկայումս այն գտնվում քայքայված և անբարեկարգ վիճակում չի ծառայում համայնքի բնակչության մշակութային կարիքների համար:

Համայնքում համապատասխան հարմարություններ չկան բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման, երեխաների մշակութային և գեղագիտական դաստիարակության համար: Համայնքում համապատասխան հարմարություններ չկան նաև սպորտի և ֆիզիկական կուլտուրայի զարգացման համար:

Համայնքի բյուջեի սահմանակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել մշակույթի տան հիմնական նորոգման և անհրաժեշտ գույքով ապահովման աշխատանքները: Այս հարցում անհրաժեշտ է պետական մարմինների և հանրապետությունում գործող ներդրումային հիմնադրամների աջակցությունը:

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումն իրականացվում է «Մարալիկի առողջության կենտրոնի», Աղինի բուժ. ամբուլատորիայի և համայնքի բուժ. մանկաբարձական կետի միջոցով: Վերջինս 2006 թվականին Հայաստանում ԱՄՆ դեսպանության «ՆՈՎԱ» ծրագրի շջանակներում և համայնքի կողմից կատարված ներդրումների շնորհիվ մասնակիորեն վերանորոգվել է:

1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՇԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Բերրի վարելահողերի առկայությունը.
- Բնակավայրի գազիֆիկացված լինելը.
- Ախուրյանի ջրամբարին մոտ գտնվելը.
- Գյումրի-Արմավիր մայրուղուն մոտ գտնվելը.
- Երկաթուղային կային մոտ գտնվելը.
- Ինքնահոս խմելու ջրերի առկայությունը.
- Արտեզյան ջրերի առկայությունը.
- Օրական կարգավորման ջրամբարի առկայությունը.
- Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ կադրերի և բանվորական աշխատուժի առկայությունը.
- Արտագնա աշխատանքից ստացվող եկամուտը.
- Նորակառույց, հարմարավետ դպրոցի և դպրոցական նախակրթարանի առկայությունը
- Համայնքի համախմբվածությունը:

1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ոռոգելի վարելահողերի բացակայությունը.
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները.
- Հակակարկտային կայանքների բացակայությունը.
- Համայնքի գյուղացիական տնտեսությունների թույլ զարգացվածությունը.
- Գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությունը.
- Որակյալ սերմերի և տոհմային ցեղատեսակների բացակայությունը, պարարտանյութերի, թունաքիմիկատների և բուժանյութերի բարձր գները.
- 1988 թ. երկրաշարժի հետևանքով համայնքի բնակֆոնդին հասցված վնասները.
- Խմելու ջրի ներքին ցանցի բացակայությունը և ջրի քանակության սակավությունը.
- Կոյուղու համակարգի բացակայությունը.
- Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները.
- Անօթևանի կարգավիճակ ունեցող 6 ընտանիքների առկայությունը.
- Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող համայնքի թվով 40 ընտանիքների առկայությունը.
- Մշակույթի տան քայքայված ու անբարեկարգ վիճակը.

- Գյուղապետարանի շենքի քայքայվածությունը.
- Միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը.
- Համայնքի բնակչության աշխատանքային թերեւեճվածությունը և գործազրկության բարձր մակարդակը.
- Երիտասարդ ընտանիքների արտահոսքը համայնքից.
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները.

1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ախուրյանի ջրամբարի և արտեզյան ջրային ռեսուրսների բազայի վրա ոռոգման համակարգի կառուցումը և գյուղատնտեսության ոլորտի զարգացումը.
- Երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքներով գյուղատնտեսական նպատակային վարկերի տրամադրման միջոցով գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացումը, գյուղ. մթերքների վերամշակման ճյուղի զարգացումը.
- Հակակարկտային կայանքների տեղադրումը:
- Միջազգային կազմակերպությունների, ներդրումային ծրագրերի և հիմնադրամների հետ համագործակցության կապերի զարգացումը:

1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄՊԱՌՆԱՅՈՂ ՎՏԱՆՔՆԵՐԸ

- Խմելու ջրի ներտնտեսային ցանցի քայքայվածությունը, ջրի սակավությունը.
- Սեյսմիկ գոտում գտնվելու հանգամանքը.
- Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների քայքայվածությունը.
- Կոյուղաջրերի հեռացման ցանցի բացակայությունը.
- Մշակույթի տան քայքայված և անմխիթար վիճակը.
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները և սեփական եկամուտների հավաքագրման դժվարությունները.
- Բնական աղետները /երաշտ, կարկտակարություն, ցրտահարություն, հեղեղավտանգ իրավիճակներ և այլն/ և բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները.
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը.

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Համայնքի ռազմավարությունն է.

Տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

Գյուղատնտեսության ոլորտի զարգացման, փոքր և միջին բիզնեսի ներդրման միջոցով ստեղծել նոր աշխատատեղեր և կանխել արտագաղթը համայնքից:

2.2. Հիմնական նպատակները

- Խմելու ջրի ներտնտեսային ցանցի կառուցման, արտեզյան խորքային հորերի հորատման, պոմպակայանի տեղադրման և ՕԿՁ-ի նորոգման միջոցով բնակչության խմելու ջրի մատակարարման բարելավում.
- Ոռոգման ցանցի կառուցում.
- Կոյուղու ցանցի կառուցում.
- Մշակույթի տան հիմնական նորոգում գույքի ապահովում.
- Գյուղապետարանի շենքի նորոգում գույքի նորացում.
- Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վերանորոգում.
- Գյուղացիական տնտեսությունների զարգացում և ֆերմերային տնտեսությունների հիմնում, գյուղատնտեսական տեխնիկայի նորացում, որակյալ սերմերի, բուժանյութերի, թունաքիմիկատների և պարարտանյութերի ապահովում.
- Հակակարկտային կայանքների տեղադրում.
- Գազի սպառիչ ցանցի կառուցում.
- Համայնքում գործարար նախաձեռնությունների խթանում, գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնում.
- Հիփոթեքային վարկերի միջոցով անհատական բնակարանային շինարարության խթանում.
- Անօթևանի կարգավիճակ ունեցող 6 ընտանիքներին բնակարանի ապահովում.

- Համայնքի մշակութային կյանքի աշխուժացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում.
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն.
- Բնակավայրի բարեկարգում, կանաչապատում, հանգստի գոտու հիմնում, փողոցների լուսավորության ցանցի վերականգնում.

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Քառամյա ժամկետում համայնքում առկա հիմնախնդիրները լուծելու, ծառայություններ մատուցելու և ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայից և համայնքի սեփական եկամուտներից: Համայնքի սեփական եկամուտների աղբյուրներն են՝ հողի հարկը, գույքհարկը, վարձակալության տրված համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարները, տեղական տուրքերն ու վճարները, ինչպես նաև համայնքի սեփականության գույքի օգտագործումից և օտարումից գոյացող միջոցները: Նախորդ 3 տարիներին համայնքի բյուջեի սեփական եկամուտները կատարվել են **34.3, 55.6 և 82.7** տոկոսներով: Նշված ժամանակահատվածում բյուջեի մուտքերի հիմնական մասը նպատակաուղղվել է նախկինում կուտակված աշխատավարձերի և սոցիալական ապահովության պարտադիր վճարների գծով կուտակված պարտքերի մարմանը, ընթացիկ աշխատավարձերի վճարմանը և համայնքում փոքրածավալ ծառայությունների մատուցմանը: Համայնքում լուրջ դժվարություններ կան հողի հարկի և գույքահարկի ապառքների հավաքագրման գործում: Առ 01.01.2011թ. դրությամբ հողի հարկի և գույքհարկի մասով կուտակված ապառքները համապատասխանաբար կազմում են՝ 10356.4 և 1719.8 հազ. դրամ:

Համայնքի բյուջեի ֆինանսական կարողությունները հնարավորություններ չեն տալիս լուծելու համայնքում առկա հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները: Համայնքում կուտակված հիմնախնդիրների լուծման հարցում անհրաժեշտ է պետական մարմինների և հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

Սեփական եկամուտների ցածր մակարդակի առկայության պայմաններում քառամյա ժամկետում համայնքի բյուջեի աճը ուղղակիորեն պայմանավորված կլինի դոտացիոն գումարների աճի, պետության կողմից տրամադրվող նպատակային հատկացումների տեմպերից: 2011թ. նախորդ տարվա համեմատությամբ համայնքի դոտացիան աճել է 9.4 տոկոսով:

Համայնքը պատրաստակամ է բաժնեմասային /համաֆինանսավորման/ կարգով մասնակցություն ունենալու հանրապետությունում գործող միջազգային ծրագրերի ու հիմնադրամների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի իրականացմանը, որի համար համաֆինանսավորման աղբյուր կարող է հանդիսանալ համայնքի բյուջեի սեփական միջոցները, համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների օտարումից գոյացող միջոցները, ինչպես նաև համայնքի բնակչության կողմից կատարվող ներդրումները:

3.6. ՀԶՇԾ_Ն ՆԵՐՈՒՎԱԾ ԱՌԱՋՆԱԳԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

N	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը /հազ. դրամ/	Դոնոր կազմակերպության ներդրում /հազ. դրամ/	Համայնքի ներդրում /հազ. դրամ/	Ներդրման նախատեսվող ժամկետը /հազ. դրամ/
1.	Մշակույթի տան շենքի վերանորոգում	16000.0	9000.0	4000.0 3000.0	2019թ. 2020թ.
2.	Խմելու ջրի մատակարարման բարելավում	20000.0	16000.0	1000.0 3000.0	2017-2018.
3.	Միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան	2600.0	0.0	600.0 1000.0	2017թ. 2018թ.

	ճանապարհների փոսային նորոգում			1000.0	2019թ.
4.	Փողոցների լուսավորության ցանցի վերականգնում	950.0	0	950.0	2017թ.
5.	Յեղեղատարների մաքրում	1500.0	800.0	700.0	2017թ.
7	գյուղապետարանի շենքի վերանորոգում, գույքի ապահովում	5000.0	2000.0	3000.0	2017 2018թ.
8	Յանգստի գոտու հիմնում	5000.0	3000.0	2000.0	2021թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ	52 100.0	30 800.0	21.3	

3.7. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՉԱՍԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ

N	Ծրագրի անվանումը	Իրականացնող կազմակերպությունը	Ծրագրի ընդհանուր բյուջեն	որից		Իրականացման տարեթիվը
				Դոնոր կազմակերպությունը	Յամայնքի ներդրում	
1	Դպրոցի շենքի վերակառուցում	«Լինսի հիմնադրամ»	530.0 մլն. դրամ.	530.0 մլն. դր.	-	2010-2011թթ.
2	Բուժ. մանկաբարձական կետի վերանորոգում	ԱՄՆ դեսպանության ,, ՆՈՎԱ,, ծրագիր, համայնք	0.6 մլն. դրամ	0.4 մլն. դրամ	0.2 մլն. դրամ	2005թ
3	Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգում	Պետ. բյուջե /ՎՅԱ ծրագիր/, համայնք	2.8 մլն. դրամ	1.3 մլն. դրամ	1.5 մլն, դրամ	2009թ.
4	Բնակավայրի գազաֆիկացում	«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ծրագիր», համայնք	285.4 մլն. դրամ	280.0 մլն դրամ	5.4 մլն դրամ	2009թ.

ՄԱՍԻՆ

4. ԸՍՏ ԱՈԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՈԱԶՆԱՅԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱՎՆԵՐԻ ԱՈԱԶԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԶԱՎԵՐՊՈՒՄ

Ըստ առանձին բնագավառների ծրագրերի ընտրության և նրանց առաջնահերթության որոշման համար հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական ծրագիրը և համայնքի ղեկավարի նախընտրական քարոզարշավի ժամանակ համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները:

ՀԶԾՕ-ի իրականացման, արժեքների գնահատման և հնարավոր ֆինանսավորման աղբյուրների բացահայտման համար հիմք են հանդիսացել տեղական բյուջեի ֆինանսական միջոցների վերլուծությունը, ՀՀ կառավարության տարածքային զարգացման ռազմավարությունը և հանրապետությունում գործող ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ հաստատած համագործակցության կապերը:

2016- 2020 թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

Ծ Ր Ա Գ Ր Ի Ր թիվ 1

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Սարակապի համայնքի մշակույթի տան շենքի վերանորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Յամայնքի մշակութային միակ օջախը մշակույթի տան շենքն է: Այն կառուցվել է 1990 թվականին և շինարարական որոշակի թերությունների և գույքի բացակայության պատճառով չի շահագործվել: Ներկայումս այն գտնվում քայքայված և

անբարեկարգ վիճակում ու չի ծառայում համայնքի բնակչության մշակութային, գեղագիտական և ազատ ժամանցի անցկացման կարիքների համար:

Մշակույթի տան վերանորոգման և համապատասխան գույքով կահավորման դեպքում այն կարող է վերակազմակերպվել համայնքային կենտրոնի, որտեղ կարող են տեղակայվել համայնքային գրադարանը, բուժ. մանկաբարձական կետը և համակարգչային կենտրոնը: Անհրաժեշտ պայմաններ կապահովվեն մշակութային և գեղարվեստական խմբակների ստեղծման, բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման համար:

Տեղական բյուջեի սահմանափակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել մշակույթի տան հիմնանորոգման և գույքի բարելավման մեծածավալ աշխատանքներ: Ուստի այս ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է պետական մարմինների, միջազգային ներդրումային դոնոր կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

Ծրագրի նպատակն է կանխել շենքի հետագա քայքայումը, նվազագույն պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, ինչպես նաև պատանիների ու երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստիարակության համար:

Ծրագրի համաֆինանսավորման համար նախնական համաձայնություն է ձեռք բերվել «Կարիտաս» բարեսիրական կազմակերպության և ՀՀ Շիրակի մարզպետարանի հետ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Կանխել մշակույթի տան շենքի հետագա քայքայումը, նվազագույն պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, ինչպես նաև պատանիների ու երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստիարակության համար: Բարելավել համայնքային գրադարանի և բուժ. մանկաբարձական կետի աշխատանքային պայմանները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել մշակույթի տան շենքի տեխնիկական վիճակը, կազմել թերությունների ակտ և նախագծա-նախահաշվային փաստաթղթեր.
- Մշակույթի տան շենքի նորոգման հարցը ներկայացնել համայնքի ավագանու քննարկմանը.
- Կազմել ծրագրի հայտ-առաջարկ և համաֆինանսավորման խնդրով դիմել «Կարիտաս» բարեսիրական կազմակերպությանը:
- Համայնքային կենտրոնի գույքի ձեռքբերման և լրկալ ջեռուսման անցկացման խնդրով դիմել ՀՀ Շիրակի մարզպետին.
- Ծրագիրն իրականացնել երկու փուլով՝
 - 1-ին փուլ՝
 - տանիքի մասնակի վերանորոգում.
 - գրադարանի, բուժ. մանկաբարձական կետի աշխատասենյակների վերանորոգում, գեղարվեստի և մշակութային 2 խմբակների համար շենքային հարմարությունների ստեղծում.
 - շենքի գազաֆիկացում:
 - 2-րդ փուլ՝
 - դահլիճի, շքանուտքի, օժանդակ սենյակների և սանհանգույցների վերանորոգում. եվրոստան տիպի դռների ու պատուհանների տեղադրում.
 - լրկալ ջեռուցման ցանցի անցկացում,
 - նոր գույքի ձեռքբերում.
 - շրջակայքի կառուցապատում, բարեկարգում և կանաչապատում:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պայմաններ կստեղծվեն համայնքի պատանիների ու երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստիարակության համար: Կբարելավվի մշակույթի տանը տեղակայվող համայնքային գրադարանի, բուժ. մանկաբարձական կետի, մշակութային ու գեղարվեստի խմբակների աշխատանքային պայմանները: Բավարար արմարություններ կստեղծվեն բնակչության հանգստի, ազատ ժամանցի, ինչպես նաև տարբեր հանդիսությունների կազմակերպման համար:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 16.0մլն. դրամի ներդրում, այդ թվում՝

- 1-ին փուլի իրականացում՝ 8 մլն. դրամ, որից՝ 4.0 մլն. դրամը կապահովվի համայնքի բյուջեից, իսկ 4 մլն. դրամը «Կարիտաս» բարեսիրական կազմակերպությունից:
- 2-րդ փուլի իրականացում՝ 8 մլն. դրամ, որից 3.0 մլն. դրամը կապահովվի համայնքի բյուջեից, իսկ 5 մլն. դրամը պետական բյուջեից:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

- 1-ին փուլի իրականացում՝ մինչև 2019 թվականի հոկտեմբեր ամիսը,
- 2-րդ փուլի իրականացում՝ մինչև 2020 թվականի նոյեմբեր ամիսը:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՆԽԱՆԱՏՈՒՄ

Սարակապի համայնքի ղեկավար՝ Արծրուն Խաչատրյան,
 Համայնքի ավագանու անդամներ:

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ՝

«Կարիտաս» բարեսիրական կազմակերպություն, ՀՀ Շիրակի մարզպետարան:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 2

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

ՀՀ Շիրակի մարզի Սարակապի համայնքի խմելու ջրի մատակարարման բարելավում

ՀԻՍՏԱԽՆԴԻԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՍՏԱԿՈՐՈՒՄԸ

Համայնքի խմելու ջուրը մատակարարվում է բնակավայրում առկա բնական աղբյուրից՝ ինքնահոս եղանակով, 1-1.5 լիտր/ վրկ. հզորությամբ: Բնակչության խմելու ջրով ապահովվածությունը կազմում է 10 տոկոս: Բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է բնակավայրի տարբեր թաղամասերում տեղադրված 3 բնական աղբյուրների միջոցով: Բնակչությունը խմելու և կենցաղային կարիքների համար ջուրը տեղափոխում է դույլերով, սայլակներով և սահնակներով: Բնակավայրի ջրամատակարարման ներքին ցանցն ունի ընդամենը 500 մ. երկարություն:

Բնակավայրն ունի արտեզյան ջրերի հարուստ պաշարներ: 70-80-ական թվականներին խորքային պոմպերի միջոցով այդ ջրերն օգտագործվել են ինչպես Սարակապի կոլտնտեսության, այնպես էլ համայնքի բնակչության խմելու ու կենցաղային կարիքների համար: Այն օգտագործվել է նաև բնակչության տնամերձ հողամասերի ուղղման կարիքների համար: Հետագայում պոմպակայանը շարքից դուրս գալու և հորատանցքը փակվելու պատճառով արտեզյան ջրերի օգտագործումը դադարեցվել է:

Համայնքը սեփականության իրավունքով ունի նաև 500 խ.մ. տարողության օրական կարգավորման ջրամբար, որը պոմպակայանի և ջրամատակարարման ներքին ցանցի առկայության դեպքում կարող է շահագործվել և բնակչությանը ապահովել շուրջօրյա ջրամատակարարում:

Տեղական բյուջեի սահմանափակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել խորքային հորի հորատման, պոմպակայանի տեղադրման և ջրամատակարարման ներքին ցանցի կառուցման մեծածավալ աշխատանքներ: Ուստի այս ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է պետական մարմինների, ներդրումային դոնոր կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

Ըստ նախնական հաշվարկների, ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար կպահանջվի շուրջ 20 մլն. դրամի ներդրում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է բարելավել համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարումը, կանխել ջրագծերի վթարները, ջրի կորուստները և հնարավոր աղտոտումները: Համայնքում ապահովել շուրջօրյա ջրամատակարարում:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել խմելու ջրի գործող ցանցի տեխնիկական վիճակը և կազմել թերությունների ակտ:
- Պատվիրել խորքային հորի հորատման, պոմպակայանի տեղադրման, ներքին ցանցի կառուցման և օրական կարգավորման ջրամբարի վերաներոզման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:
- Դիմել ՀՀ Շիրակի մարզպետին խորքային հորի հորատման և պոմպակայանի տեղադրման աշխատանքները ՀՀ պետական բյուջեի 2017 թվականի ծրագրում ընդգրկելու համար:
- Իրականացնել ջրամատակարարման գործող ցանցի 500 գծ.մ. երկարության խողովակաշարերի վերանորոգման աշխատանքներ:
- Իրականացնել խորքային հորի հորատման և պոմպակայանի մոնտաժման աշխատանքներ:
- Վերանորոգել 500 խ. մ. տարողության օրական կարգավորման ջրամբարը:
- Իրականացնել 2000 գծ.մ. ջրամատակարարման ներքին ցանցի կառուցման աշխատանքներ:

- Ծրագրի օժանդակ աշխատանքներն իրականացնելու համար կազմել հայտ-առաջարկ և այն ներկայացնել ՄԱԿԻ-ի ՀՊԾ «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրին:
- Ծրագրի իրականացման համար պահանջվող շինարարական նյութերը, տրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործումն պահովել համայնքի բյուջեի և համայնքի բնակչության ներդրումների հաշվին

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ կբարելավվի համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարումը, կկանխվեն ջրի կորուստները և հնարավոր աղտոտումները, համայնքի բնակչությունը կապահովվի շուրջօրյա ջրամատակարարմամբ:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի ծավալները

Նախատեսվում է իրականացնել՝

1. 60-80 մետր խորության խորքային հորի հորատման աշխատանքներ.
2. 8 լիտր/վրկ. հզորության խորքային պոմպի և տրանսֆորմատորային ենթակայանի տեղադրման աշխատանքներ.
3. գործող ցանցի 500գծ. մ. երկարության ջրատար խողովակների վերանորոգման աշխատանքներ.
4. 2000գծ.մ. երկարության ներտնտեսային ցանցի կառուցման աշխատանքներ:
5. 500 խ.մ. տարողության օրական կարգավորման ջրամբարի վերանորոգման աշխատանքներ.

Ֆինանսական միջոցների գնահատում

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 20.0 մլն. դրամի ներդրում, այդ թվում՝

1. խորքային հորի հորատման աշխատանքներ՝ 7.0 մլն. դրամ- պետական բյուջե:
2. խորքային պոմպի և տրանսֆորմատորային ենթակայանի տեղադրում՝ 3.0 մլն դրամ – պետական բյուջե:
3. 500գծ. մ. երկարության գործող ցանցի վերանորոգում՝ 1.0 մլն. դրամ – համայնքի բյուջե:
4. 2000գծ.մ. երկարության ներքին ցանցի կառուցում՝ 8.0 մլն. դրամ, որից՝ ՄԱԿԻ ՀՊԾ «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագիր / 3մլն. դրամ/, համայնքի բյուջե 3.0մլն. դրամ , բնակչության ներդրում / 2.0մլն. դրամ/:
5. 500 խ.մ. տարողության օրական կարգավորման ջրամբարի վերանորոգում՝ 1.0 մլն.դրամ - ՄԱԿԻ ՀՊԾ «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագիր, համայնքի բյուջե, բնակչության ներդրում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

խմելու ջրի ներտնտեսային ցանցի նորոգման աշխատանքները նախատեսել՝ 2017 -2018 թվականների ընթացքում:

2017թվականին իրականացնել՝

խորքային հորի հորատման, պոմպի, տրանսֆորմատորային ենթակայանի տեղադրման, պոմպակայան ՕԿՋ սնուցող ջրատարի կառուցման և ՕԿՋ-ի վերանորոգման աշխատանքները:

2018 թվականին՝

գործող ցանցի 500գծ. մ. երկարության ջրատար խողովակների վերանորոգման, 2000 գծ.մ. երկարության ներտնտեսային ցանցի և սպառիչ ջրագծերի կառուցման աշխատանքները:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՆԽԱՆԱՏՈՒՄ

Սարակապի համայնքի ղեկավար՝ Արծրուն Խաչատրյան:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 3

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Սարակապի համայնքի միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Սարակապ – Գյումրի - Արմավիր հանրապետական նշանակության միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհները գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, առանձին տեղամասեր անանցանելի են հետիոտնի և տրանսպորտային միջոցների համար: Քայքայված են նաև համայնքի վերին գոտու դաշտամիջյան ճանապարհների առանձին տեղամասեր, որի պատճառով համայնքի գյուղացիական տնտեսությունների համար լուրջ դժվարություններ են ստեղծվում դաշտավարական աշխատանքների իրականացման ժամանակ:

Վերանորոգման աշխատանքների նկարագրությունը

1. Հանքակապի միջոցով փոսլցման և ավազե ծածկույթով հարթեցման են ենթակա Սարակապ – Գյումրի - Արմավիր հանրապետական նշանակության միջհամայնքային 4 կմ երկարության և ներհամայնքային 3 կմ երկարություն ճանապարհները: ճանապարհների առանձին տեղամասերում ճեղքված քարերի և գետաքարերի միջոցով անհրաժեշտ

իրականացնել նաև սալարկման աշխատանքներ: Փոսալցման են ենթակա նաև բնակավայրի վերին գոտու դաշտամիջյան ճանապարհների առանձին տեղամասեր:

Անհրաժեշտ է իրականացնել վերանորոգվող ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրման, շինարարական և կենցաղային աղբի տեղափոխման, ջրահեռացման առվակների բացման աշխատանքներ: Սանիտարական մաքրման է ենթակա 15000քառ. մ. տարածք: Ըստ նախնական հաշվարկների անհրաժեշտ է մաքրել և տեղափոխել մոտ 50 խ.մ. շինարարական և կենցաղայի աղբ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի դարձնել համայնքի քայքայված և անանցանելի փողոցները: Դաշտավարական աշխատանքներ իրականացնելիս համայնքի գյուղացիական տնտեսությունների բեռնատարներ, գյուղ. մեքենաների ու մեխանիզմների համար ապահովել անվտանգ երթևեկություն, կանխել վթարավտանգ իրավիճակները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ծրագրի իրականացման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծել աշխատանքային խումբ:
- Ուսումնասիրել նորոգման ենթակա ներհամայնքային ճանապարհների տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ և նախագծամախահաշվային փաստաթղթեր :
- Ճանապարհների նորոգումը կատարել խճապատման, սալարկման և մանրահատիկ ավազե ծածկույթի իրականացման միջոցով:
- Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ շինարարական նյութերը, տրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործումը ապահովել համայնքի բյուջեի միջոցներով: Ճանապարհների վերանորոգման և շրջակայքերի սանիտարական մաքրման աշխատանքներին ներգրավել համայնքի բնակչությանը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար կապահովվի բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի կդառնան համայնքի քայքայված և անանցանելի փողոցները: Գյուղատնտեսական մեքենաների ու մեխանիզմների, ինչպես նաև բեռնատարների համար կապահովվի անվտանգ երթևեկություն, կկանխվի վթարավտանգ իրավիճակները:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծավալների նկարագրությունը

Գ/հ	<i>Միջհամայնքային և ներհամայնքային տեղամասերի տեղամասերը</i>	<i>Տեխնիկական վիճակի նկարագրությունը</i>	<i>Անհրաժեշտ աշխատանքների նկարագրությունը և ծավալները</i>
1.	Սարակապ-մայրուղի միջհամայնքային ճանապարհ	<p>միջհամայնքային 4 կմ երկարություն ունեցող ճանապարհի 1000 գծ.մ. երկարության 6000քառ.մ. ընդհանուր մակերեսով տարբեր տեղամասերը գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում: Առանձին հատվածներ մարդատար ավտոմեքենաների համար դարձել են անանցանելի</p> <p>Ճանապարհի շրջակայքերում առկա են շինարարական և կենցաղային աղբի կուտակումներ:</p>	<p>Հանքակոպճի միջոցով անհրաժեշտ է իրականացնել 600 ք.մ. տարածքի փոսլցման աշխատանքներ, որի համար կպահանջվի 60 խ.մ. հանքակոպիճ, ավազե ծածկույթով անհրաժեշտ իրականացնել 6000ք.մ. տարածքի հարթեցման աշխատանքներ, որ համար կպահանջվի 120 խ.մ. ավազ:</p> <p>Անհրաժեշտ իրականացնել ճանապարհների շրջակայքի սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքներ: Անհրաժեշտ է մաքրել և տեղափոխել մոտ 20խ.մ. կենցաղային և շինարարական աղբ:</p>

2.	Ներհամայնքային ճանապարհներ	Ներհամայնքային ճանապարհները գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում: Առավել քայքայված և անանցանելի են ներհամայնքային 1000 մ. ընդհանուր երկարության ճանապարհահատվածները՝ 6000քառ.մ. ընդհանուր մակերեսով, առանձին տեղամասեր անանցանելի են տրանսպորտային միջոցների համար:	Հանքակոպճի միջոցով անհրաժեշտ է իրականացնել 1200ք.մ. տարածքի փոսլցման աշխատանքներ, որի համար կպահանջվի 100խ.մ. հանքակոպիճ, ավագե ծածկույթով անհրաժեշտ իրականացնել 6000ք.մ. տարածքի հարթեցման աշխատանքներ, որ համար կպահանջվի 100խ.մ. ավագ: Ընդամենը՝ 3000գծ.մ. մակերեսը՝ 15000քառ.մ.
		Լցված են ներհամայնքային ճանապարհների 800գծ. մ. ընդհանուր երկարության ջրահեռացման առվակները, փողոցների շրջակայքերում առկա են կենցաղային և շինարարական աղբակույտեր:	Անհրաժեշտ է մաքրել փողոցների եզրային 800 գծ. մ. ընդհանուր երկարության ջրահեռացման առվակները և փողոցների շրջակայքերի կենցաղային և շինարարական աղբակույտերը:
3.	Դաշտամիջյան ճանապարհներ	Քայքայված և անանցանելի են համայնքի վերին գոտու դաշտամիջյան ճանապարհների տարբեր տեղամասերի շուրջ 400 մ ընդհանուր երկարության հատվածներ, որի պատճառով համայնքի գյուղացիական տնտեսությունների համար լուրջ դժվարություններ են ստեղծվում դաշտավարական աշխատանքների իրականացման ժամանակ:	Ճեղքված քարերի, հանքակոպճի և գրունտային լիցքի միջոցով անհրաժեշտ է իրականացնել 2000 ք.մ. տարածքի փոսլցման աշխատանքներ, որի համար կպահանջվի 300 խ.մ. ճեղքված քար, հանքակոպիճ և գրունտային նյութեր:

Միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգման աշխատանքների իրականացման Ֆինանսական միջոցների գնահատում

Չ/հ	Աշխատանքների նկարագրությունը, նյութերի անվանումը,	Չափի միավոր	Քանակը	Միավորի արժեքը /դրամ/	Ընդհանուր արժեքը /դրամ/	Նշումներ
Տեխնիկական միջոցների շահագործում						
1	Էքսկավատորի շահագործում -Հանքակոպիճի բարձում՝ 660խ.մ. -Ավազի բարձում՝ 540խ.մ. -Շինարարական և կենցաղային աղբի բարձում՝ 50խ.մ.	ժամ	250	1200	300000	
2	Հանքակոպիճի տեղափոխում /	խ.մ.	260	1000	260000	
3	Ավազի տեղափոխում	խ.մ.	380	1000	380000	
4	Ճեղքված քարերի և գրունտային լիցքերի տեղափոխում	խ.մ.	400	1000	400000	
	Ընդամենը՝ Տեխնիկական միջոցների շահագործում	X	X	X	1340000	
Աշխատանք						
4	Ճանապարհների եզրերի ջրահեռացման առվակների մաքրում	գծ.մ.	1500	X	X	Համայնքի ուժերով
5	Ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրում	ք.մ.	20000	X	X	Համայնքի ուժերով
	Ընդամենը աշխատանք	X	X	X	X	
Նյութեր						
1	Հանքակոպիճ	խ.մ.	260	X	X	Անհատույց
2	Ավազ	խ.մ.	300	X	X	Անհատույց

3	Դիզելային վառելանյութ	լիտր	3000	420	1260000	
	Ընդամենը նյութեր				1260 000	
	Ընդամենը նախահաշվով				2 600 000	

- Ծրագրի իրականացման համար պահանջվող շինարարական նյութերի, տրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործումը ապահովելու համար համայնքի բյուջեից կատարել 2600.0հազ. դրամի ներդրում:
- Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների կատարումը իրականացնել համայնքի ուժերով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Դաշտմիջյան ճանապարհի փոսային նորոգման աշխատանքներն իրականացնել 2017 թվականի մայիս-օգոստոս ամիսներին / ֆինանսական ներդրում՝ 600 000 դրամ/:

Ներհամայնքային ճանապարհի փոսային նորոգման աշխատանքներն իրականացնել 2018 թվականին / ֆինանսական ներդրում՝ 1 000 000 դրամ/:

Միջհամայնքային ճանապարհի փոսային նորոգման աշխատանքներն իրականացնել՝ 2019 թվականին /ֆինանսական ներդրում՝ 1 000 000 դրամ/:

: ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՆԽԱՆԱՏՈՒՄ

Սարակապի համայնքի ղեկավար՝ Արծրուն Խաչատրյան:
 Համայնքի ավագանու անդամներ:

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝
 Համայնքի բնակչություն:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ր թիվ 4

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ

ՀՀ Շիրակի մարզի Սարակապի համայնքի փողոցների լուսավորության ցանցի վերականգնում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Շուրջ 20 տարի է ինչ չի գործում համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցը: Ցանցի բացակայության պատճառով խիստ դժվարացել է համայնքի բնակչության գիշերային ժամերի տեղաշարժը: Եղել են դեպքեր երբ համայնքի բնակիչները գիշերային ժամերին ենթարկվել է թափառող շների հարձակումներին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿ

Ծրագրի նպատակն է գիշերային լուսավորության ցանցի վերականգնման շնորհիվ ապահովել համայնքի բնակչության գիշերային ժամերի անվտանգ երթևեկությունը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ

- Ուսումնասիրել համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցի տեխնիկական վիճակը, կազմել թերությունների ակտ և նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:
- «Հայաստանի էլեկտրացանցեր» ընկերության հետ կնքել պայմանագիր և իրականացնել համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցի վերականգնման թվով 30 լուսարձակների տեղադրման աշխատանքները:
- Ապահովել ցանցի անխափան շահագործումը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Գիշերային լուսավորության ցանցի վերականգնման շնորհիվ կապահովվի համայնքի բնակչության գիշերային ժամերի անվտանգ երթևեկությունը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների գիշերային լուսավորության ցանցի վերականգնման և թվով 30 լուսարձակների տեղադրման համար կպահանջվի 2.0 մլն. դրամի ներդրում: Ծրագրի իրականացման համար համայնքի բյուջեից հատկացնել 2.0 մլն. դրամ: Լուսարձակների հենասյուների համար անհրաժեշտ խողովակները ապահովել համայնքի անդամների ներդրումների միջոցով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2017թ. 2-րդ կիսամյակում:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՆԽԱՆԱՏՈՒՄ

Սարակապի համայնքի ղեկավար՝ Արծրուն Խաչատրյան:
 Համայնքի ավագանու անդամներ:

ԾՐԱԳՐԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ՝
 Համայնքի բնակչություն:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 5

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ

ՀՀ Շիրակի մարզի Սարակապի համայնքի հեղեղատարների մաքրում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Համայնքի շուրջ 1,5 կմ ընդհանուր երկարության հեղեղատարները լցված են ջրաբերուկներով և կենցաղային աղբով: Լիարժեք ջրահեռացում չապահովվելու պատճառով հեղեղումների են ենթարկվում համայնքի առանձին թաղամասերի բնակելի տները, օժանդակ կառույցներն ու տնամերձ հողամասերը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿ

Ծրագրի նպատակն է մաքրել համայնքի 1.5 կմ ընդհանուր երկարության հեղեղատարները, առանձին հատվածներում կատարել հունների ու պատերի ամրացումներ, կանխել բնակելի տների, օժանդակ կառույցների ու տնամերձ բանջարանոցների հեղեղումները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Կազմավորել ծրագրի իրականացման աշխատանքային խումբ:
- Ուսումնասիրել հեղեղատարների մաքրման և հունների ամրացման աշխատանքների ծավալները, կազմել թերութունների ակտ և ծրագրային փաստաթղթեր:
- Ծրագրի օժանդակ աշխատանքներն իրականացնել «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով, որի համար կազմել հայտ-առաջարկ և այն մինչև 2017թ. մայիս ամիսը ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետարան:
- Ծրագրի իրականացման համար պահանջվող շինարարական նյութերը, տրանսպորտային և տեխնիկական միջոցները ապահովել համայնքի բյուջեի և համայնքի անդամների ներդրումների հաշվին:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքում կապահովվի նորմալ ջրահեռացում, կկանխվի բնակելի տների, օժանդակ կառույցների ու տնամերձ բանջարանոցների հեղեղումները:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 1500 հազ. դրամի ներդրում, որից 800.0 հազ. դրամը նախատեսել «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով, իսկ 700.0 հազ. դրամը հատկացնել համայնքի բյուջեից: Ծրագրի իրականացման աշխատանքներին ներգրավել համայնքի բնակչությանը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագին իրականացնել 2017 թվականի 1-ին եռամսյակներում:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Սարակապի համայնքի ղեկավար՝ Արծրուն Խաչատրյան:
Համայնքի ավագանու անդամներ:

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ՝

Համայնքի բնակչություն:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 6

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ

ՀՀ Շիրակի մարզի Սարակապի գյուղապետարանի շենքի վերանորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Համայնքի գյուղապետարանի շենքը կառուցվել է 1960-ական թվականներին և օգտագործվել է որպես Սարակապի նախկին կոլտնտեսության և գյուղական խորհրդի գործկոմի գրասենյակ: Շենքը իր կառուցման օրվանից հիմնական նորոգման չի ենթարկվել: Քայքայված է շենքի տանիքը, աշխատասենյակներն ու շքանուտքը: Շենքը չունի սանիտարական հանգույց և ջեռուցման համակարգ: Ֆիզիկական և բարոյական մաշվածության է ենթարկված գյուղապետարանի գույքը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿ

Նորոգել գյուղապետարանի շենքը, այն համալրել ժամանակակից գույքով և համակարգչային տեխնիկայով, կապի ժամանակակից միջոցներով ու սարքավորումներով: Հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի աշխատակազմի բնականոն գործունեության համար:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել շենքի տեխնիկական վիճակը, կազմել թերությունների ակտ և նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:
- Մրցութային կարգով ընտրել Շինարարական կազմակերպություն և վերանորոգման աշխատանքներն իրականացնել «Գնումների մասին» հայաստանի հանրապետության օրենքով սահմանված կարգով:
- Ապահովել ծրագրի կառավարումը և աշխատանքների կազմակերպումը:
- Գյուղապետարանի համար ձեռք բերել ժամանակակից գույք, համակարգչային տեխնիկայով, կապի ժամանակակից միջոցներ ու սարքավորումներ:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ հարմարավետ պայմաններ ապահովել համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի աշխատակազմի բնականոն գործունեության, ինչպես նաև համայնքի բնակչության սպասարկման համար:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի

5.0 մլն. դրամի ներդրում:

Աշխատանքների ծավալների նկարագրությունը՝

Ձ/հ	Աշխատանքի ծավալը	Չափման միավոր խ.մ	Ծավալ
1	Գերանների և հենակների փոխում, կավարամածի ուժեղացում		500
2	Տանիքածածկի թիթեղապատում	ք.մ.	300
3	Ջրիոս խողովակների տեղադրում	գծ.մ.	20.0
4	Էլ. սնուցման ցանցի մոնտաժում	կետ	26
5	Արտաքին պատերի վերանորոգում	ք.մ	300.0
6	Ներքին պատերի և առաստաղների սավաղում և հարդարում	ք.մ.	600.0
7	Եվրոստան տիպի դռների և պատուհանների տեղադրում	ք.մ.	26.0
8	Հատակների բետոնե հարթեցուցիչ շերտի և լամինատե հատակների իրականացում	ք.մ.	250.0
9	Ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի անցկացում	խ.մ	186.0
10	Սալիկապատման աշխատանքներ	ք.մ.	22.0
11	Սան. հանգույցների տեղադրում	հատ	4
12	Շենոի շրջակայքի բարեկարգում	ք.մ.	80

Ծրագիրն իրականացման համար համայնքի բյուջեից հատկացնել 3.0 մլն, դրամ, իսկ 2.0 մլն դրամը ապահովել համայնքի գործարարների կողմից կատարվող ներդրումներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը նախատեսվում և իրականացնել 2017-2018թ. ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄ

Սարակապի համայնքի ղեկավար՝ Արծրուն Խաչատրյան:

Ծ Ր Ա Գ Ր թիվ 7

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Սարակապի համայնքում հանգստի գոտու հիմնում:

ՀԻՄՆԱԽՆՆՈՒՄԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքը չունի հանգստի գոտի, որտեղ հնարավոր կլինի կազմակերպել համայնքի բնակչության հանգիստն ու ազատ ժամանցը: Գյուղապետարանի շենքի դիմացի տարածքում կա ընդհանուր օգտագործման 1000 ք. մ. տարածք, որ կարելի է կառուցապատել որպես հանգստի գոտի:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է համայնքի բնակչության հանգիստի ու ազատ ժամանցի կազմակերպման համար համայնքում հիմնել հանգստի գոտի:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Կազմավորել ծրագրի իրականացման աշխատանքային խումբ:
- Կազմել հանգստի գոտու կառուցապատման ուղվագծային հատակագիծ և նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:
- Կազմել 3000 մարդ/օր ծավալի աշխատանքներ իրականացնելու համար հայտ առաջարկ և այն ներկայացնել ՄԱԿ-ի ՀՊԾ «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրին:
- Ծրագրում ներառել հետևյալ աշխատանքները՝
 - տարածքի հարթեցում և ցանկապատում,
 - կանաչ գոտիների և անցուղիների կառուցապատում,
 - ծառատունկի իրականացում, սիզամարգերի կանաչապատում,
 - խաղատաղավարների կառուցում և նստարանների տեղադրում,
 - մանկական խաղերի տեղադրում,
 - ջրագծի անցակցում
 - հուշարձան աղբյուրի տեղադրում,
 - լուսավորության ցանցի անցկացում,
- Հանգստի գոտու պահպանության և խնամքի կազմակերպում:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի բնակչության հանգիստի ու ազատ ժամանցի համար կստեղծվեն հարմարավետ պայմաններ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների հանգստի գոտու կառուցապատման համար կպահանջվի 5 մլն. դրամի ներդրում, որից 3000 մարդ/օր ծավալի աշխատանքները /3.0մլն. դրամ/ նախատեսել ՄԱԿ-ի ՀՊԾ «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրով, իսկ 2.0մլն. դրամը հատկացնել համայնքի բյուջեից:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրն իրականացնել 2021թվականի ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Սարակապի համայնքի ղեկավար՝ Արծրուն Խաչատրյան:

Ծրագրի աջակիցներ՝ համայնքի անդամներ:

5. ՀԶՃԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

N	Ցուցանիշը	Չափի միավոր	2017թ. փաստացի	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում	2021թ. կանխատեսում
1	2	3	4	5	6	7	8
1	Համայնքի տարածքը	հա					
2	Բնակչության թիվը	մարդ					
3	Տն. տնտեսությունների թիվը	ընտ.					
4	Ծնունդը						
5	Մահացությունը	մարդ		*	*	*	*
6	Աշխատունակ բնակչություն.	մարդ					
7	Ջրաղվածները ընդամենը այդ թվում ըստ տնտեսության ճյուղերի՝	մարդ					
	ա/ գյուղատնտեսություն /թերի բեռնվածությամբ/	մարդ					
	բ/արդյունաբերություն	մարդ					
	գ/չինարարություն	մարդ					

	բ/ ծառայությունների ոլորտ.	մարդ					
	դ/այլ ոլորտներ	մարդ					
8	Գործազրկության մակարդակը	%					
9	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ					
10	Գյուղատնտեսական նշանակության հողեր	հա					
	այդ թվում վարելահողեր	հա					
11	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%					
12	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկայնությունը	կմ					
13	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ					
14	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա					
15	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ					
16	Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ					
17	Ընդամենը բնակ -ֆոնդ այդ թվում`	հատ բն./ ք.մ					
	-Համայնքային	հատ ք.մ					
	-Մասնավոր բնակ. ֆոնդ	հատ ք.մ					
18	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում	հատ					
	Անօթևանի կարգավիճակ ունեցող	հատ					
19	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լիտր/ օր					
20	Ջրի կորուստները ցանցում	%					
21	Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում	մարդ					
22	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ					
23	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ					